

վրայ ալ եղիազար կաթողիկոսին (մինչեւ 1682 յերուսաղէմ, այնուհետեւ Էջմիածին) գրած նամակներուն մէջ յիշատակութիւն ըրած պիտի ըլլայ, եւ եթէ նոյն նամակները երուսաղէմ կամ Էջմիածին դեռ կը պահուին, կրնան օր մը լուսաւորել այս մութ կէտերը:

Կայ սակայն շատ զօրաւոր վկայագիր մը մեր ձեռքը. այն է Ղալաթիոյ Ս. Գ. Լուսաւորիչ եկեղեցւոյ քահանաներուն 15 Ապր. 1678 թուականաւ առ Նիկողայոս Թորոսեան, Լեւպէրկի հայ կաթողիկէ Առաջնորդն գրած մագաղաթեայ շատ գեղեցիկ խորանազարդով եւ մանրանկարներով զարդարուած նամակն, որ այժմ կը գտնուի Վիենն. Մխ. Մտդոնը. (թ. 561, Տաշեան, էջ 1030): Այս նամակին մէջ ստորագրող 11 քահանաներ մի միայն կը յանձնարարեն Ղրիմցի Առաքել անուն հայ մը, որ քրիստոնեայ գերիներ Թաթարներու ձեռքէն կ'ազատէր: Նամակիս անձամբ ինքնագիր ստորագրած են՝ Աւագերէց Տէր Անտոն, եւ Թաթէոս, Աստուածատուր, Մկրտիչ, Յարութիւն, Յակոբ, Պօղոս, Գասպար, Զաքարիա, Արրահամ եւ Յոհան երէցներ: Սկիզբը Նիկողայոս Արքեպ. ին հաւատակից եղողն մը վերագրիրներ կու տան, եւ ինքնաբերաբար իրենց կաթողիկէ հոռմէական հաւատքն ունենալը կը յայտնեն: Ար գրեն. «Նիկոլայոսի Արհեպիսկոպոսի: Վեհագոյն՝ եւ երիցս երանեալ տիեզերահամբաւարհի եւ արհիապատիւ. սրբազան՝ ուղղաշաւիղ ուղղափնաց՝ եւ ուղղափառ անձանձիր ուսուցա-